ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՏՈՒՍԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս, , noratus.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 42

## 2018թ.ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով Նորատուս համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Նորատուս գյուղական համայնքի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 7 նիստի օրակարգը:
2. Նորատուս համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և դրույքաչափերի սահմանման մասին.
3. Համայնքի 2019 թվականի բյուջեի նախագիծը հաստատելու մասին.
4. Պահուստային ֆոնդից ծախսեր կատարելու մասին.
5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱԹԵՅԱՆ ԽԱԺԱԿ

ԱՍՈՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԱԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՆՈՐԱՏՈՒՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս, , noratus.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 45

## ՆՈՐԱՏՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ կետով Նորատուս համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Պահուստային ֆոնդից հատկացնել 500000 (հինգ հարյուր հազար) դրամ դրամաշնորհի համայնքում «Վիզիթնորատուս» ծրագրի (Զբոսաշրջության զարգացման և ներդրողների ներգրավման համար նախապայմաններ ստեղծելու ծրագիր) իրականացման համար:
2. Ծախսերը կատարել 4639 հոդվածով:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման  հաջորդ օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱԹԵՅԱՆ ԽԱԺԱԿ

ԱՍՈՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԱԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐԱՏՈՒՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս, , noratus.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 44

ՆՈՐԱՏՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի Նորատուս համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Նորատուս համայնքի 2019 թվականի բյուջեի նախագիծը՝
   ա) եկամուտների գծով՝ 148200,0 հազ. դրամ
   բ) ծախսերի գծով՝ 161241,4 հազ. դրամ
   գ) Դեֆիցիտը՝ 13041,4 հազ. դրամ
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱԹԵՅԱՆ ԽԱԺԱԿ

ԱՍՈՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԱԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՏՈՒՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս, , noratus.gegharquniq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 43

ՆՈՐԱՏՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի 12-րդ հոդվածի 1, 3, 4, 9 կետերի, 14-րդ հոդվածի 3, 5, 7, 14 կետերի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով և «Աղբահանության և սանիտարական մաքրմանմասին» Հայաստանի Հանրապետության օրենքով. Նորատուս համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1) Համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
ա) հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
- 200-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ,
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվությունչպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ,
3. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ.

4. Համայնքի վարչական տարածքում ոգելից ալկահոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝
ա) ոգելից ալկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 դրամ,
բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 դրամ,

2) Համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքները ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ.
2. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթներին աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500 դրամ.
3. Համայնքում աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝
ա) ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար աղբաթափման վարձավճար ամսական 65 դրամ,
բ) առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի բնակչության սպասարկման այլ ծառայությունների 1 ք.մ. համար՝ 50 դրամ,
գ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1 ք.մ. համար5 դրամ,
դ) կրթական, մշակութային, առողջապահականշինությունների 1 ք.մ. համար3 դրամ
4. Համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպություններ հաճախող երեխաներից գանձվող ծնողական վճար՝ ամսական մեկ երեխան 2000 դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱԹԵՅԱՆ ԽԱԺԱԿ

ԱՍՈՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄՈՒՐԱԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**